«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

Հաստատություն՝ Արտաշատ քաղաքի թիվ 5 մսուր մանկապարտեզ

Դաստիարակ՝ Բաբայան Շողեր Վահագնի

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1

Ներառական կրթության կարևորությունը նախադպրոցականի զարգացման գործում…… 5

Գլուխ 2

2.1 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դիտարկումը, և գնահատումը…… 11

2.2 Ուսուցչի դերը ներառական կրթության կազմակերպման գործընթացում…… 14

Գլուխ 3

Հետազոտական մաս……16

Եզրակացություն……17

Օգտագործված գրականություն……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներառական կրթությունը օրեցօր մեծ կարևորություն է ձեռք բերում ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: 1999 թվականի ապրիլի 14-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքով սկիզբ դրվեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումներին ու ներառական կրթության հիմնադրմանը, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հասարակության մեջ ներառման գործընթացը կախված է այդ երեխաների նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատողների տեղեկացվածությունից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարեցումների տրամադրումը:

Շատ կարևոր է ճիշտ ժամանակին բացահայտել երեխաներին, որոնք ունեն մասնագիտական առանձնահատուկ աջակցության կարիք: Կարևոր է բացահայտել նաև երեխայի սովորելու կարողությունների ձևավորվածությունը, ընդհանուր տեղեկացվածությունը, սոցիալ-կենցաղային կողմնորոշումը, շրջապատի մասին գիտելիքներն ու պատկերացումները, ճանաչողական գործընթացների ձևավորվածությունը, հուզակամային, շարժողական ոլորտի առանձնահատկությունները: Այս տեղեկատվությունը շատ կարևոր է հետագայում երեխայի ուսուցման ձևի ընտրության և անհատական զարգացման ծրագրերի բովանդակության մշակման համար:

Արդիականությունը: Այսօր նախադպրոցական հաստատությունների մեծ մասը դարձել են ներառական և յուրաքանչյուր դասարանում կարող են սովորել ԿԱՊԿՈՒ երեխաներ, որոնք

ունեն գրավոր խոսքի դժվարություններ, ուստի դրանց հաղթահարման նպատակով պետք է մշակել մեթոդական քայլաշար:

Աշխատանքի **նպատակն** է բացահայտել ԿԶԱՊԿՈՒ երեխաների առանձնահատկությունները

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները.**

2. ուսումնասիրել ներառական կրթության մեջ ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները

Աշխատանքի իրականացման ընթացքում կիրառվել են հետազոտական հետևյալ

մեթոդները՝

1.Գիտամեթոդական գրականության ուսումնասիրում

2. Դիտման և հարցման կիրառում

3. Փորձարարական դասերի վարում և վերլուծություն:

ԳԼՈՒԽ 1

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Կրթության մասին[1]» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթության համակարգի բարեփոխում ների ու ներառական կրթության հիմնադրման, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը: Որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և գնահատել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով և դժվարություններով[2]:

Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ընդհանուր կրթության այնպիսի գործընթաց, որը մատչելի է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար: Այսինքն արդյունքում կրթությունը դառնում է մատչելի, հասանելի բոլոր այն սովորողների համար, որոնք ունեն մտավոր կամ ֆիզիկական խնդիրներ: Ներառական կրթության մեթոդաբանության համաձայն՝ հատուկ կարիքներ ունեցող սովորողները տարբեր պահանջմունքներ ունեցող անհատներ են, որոնց համար հանրակրթական ուսումնական հաստատությունների պայմաններում պետք է կազմակերպվի ուսուցման ճկուն համակարգ, ընտրվեն նրանց կարողություններին մատչելի մեթոդներ և առավելագույն ապահովվի նրանց ուսուցման և զարգացման որակը:

Ներառական կրթություն ասելով պետք է հասկանալ՝

- Բազմազանության ընդունում
- Անհատական մոտեցում
- Բաց և ճկուն ուսումնական ծրագրերի ապահովում
- Կրթական համակարգի հարմարեցում
- Լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծում

[1] «Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6
[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, մաս 1, 10.5 կետ

- Խտրականության բացառում:

Ներառական կրթության կազմակերպման հիմնական սկզբունքներն են՝

- Մարդու իրական արժեքը պայմանավորված չէ միայն նրա ընդունակություններով նվաճումներով:
- Յուրաքանչյուր մարդ ընդունակ է զգալու և մտածելու:
- Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի հաղորդակցվելու, լսված լինելու և արտահայտվելու:
- Բոլոր մարդիկ աջակցության և հասակակիցների հետ շփվելու կարիք ունեն:
- Բազմազանությունը ուժեղացնում է կյանքի բոլոր որակները:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր երեխաների հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաների: Ներառական կրթության զարգացմանն օժանդակում են դաստիարակները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:

Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ, սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, կրթություն ստանալուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է

ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում է երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ հաստատություններում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Բազմաթիվ մանկավարժներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին

հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է սաների ակտիվության բարձրացմանը:

Ներառական կրթության առանձնահատկությունն այն է, որ կրթությունը պետք է հիմնվի բազմազանության վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կարիքները:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքները: Երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստ ատմանը:

Արդի սոցիալական, հոգեբանամանկավարժական հետազոտությունները հաստատում են այն փաստը, որ ներկա ժամանակներս բազմաթիվ կենսագենետիկ, սոցիոգենետիկ և հոգեգենետիկ գործոնների ազդեցության հետևանքով ավելի են շատացել զարգացման և վարքի շեղումներով երեխաները: Յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները: Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Սակայն ներառական կրթության ներմուծումը ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար է բարենպաստ ազդեցություն ունենում, այլև վերջիններիս նորմալ զարգացող տարեկիցների համար: Ուսուցման ընդհանուր պրոցեսում նորմալ զարգացման ընթացք ունեցող երեխաները, շփվելով հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, ձևավորում են հանդուրժողականություն, ձգտում օգնել նրանց, իսկ հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ ցածրանում է ագրեսիվության և անհանդուրժողականության ռիսկը: Համատեղ ուսուցման իրականացման փորձը վկայում է, որ այդ բարդ գործընթացը պահանջում է դպրոցի սովորական կենսաձևի վերակառուցում: Հոգեբանական հարմարման

տեսանկյունից անհրաժեշտ է դառնում կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանկավարժների, երեխաներիների և ծնողների կողմից ընդունմանը, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններով սովորողի համար պայմաններ ստեղծել՝ ընդգրկվելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատությունում գործող նորմերն ու կանոնները: Զարգացման խանգարումներով երեխաներին ընդհանուր կրթության գործընթաց ներառող դաստիարակների գործունեության արդյունավետության վրա ազդող հիմնական հոգեբանական գործոնը այդ երեխաներին հոգեպես ընդունունելն է: Մանկավարժի պատրաստվածությունը ունի երկու հիմնական ցուցանիշ՝ մասնագիտական պատրաստվածություն և հոգեբանական պատրաստվածություն: Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը խնդրի հաջող լուծման հիմքն է, որը ներառում է բոլոր անհրաժեշտ և բավարար առաջիկա գործողությունների տարրերը:

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև հատուկ կարիքների և սահմանափակ հնարավորություն ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է մասնակցությունը ուսումնական, մշակույթային և համայնքային կյանքին և նվազեցնում է բացառումը կրթությունից: Ներառումն բազմակողմ գործընթաց է: Այն արտացոլում է սոցիալական, իրավական, տնտեսական, հոգեբանական և մանկավարժական հիմնախնդիրների համադրությունը:Ներառումն անհրաժեշտ է, քանի որ երեխաները անկախ սահմանափակ հնարավորությունների կամ կրթական դժվարությունների, ապագայում որոշակի դեր ունեն հասարակության մեջ: Ներառական կրթության հիմնական նպատակը, որպեսզի ինչ-ինչ խնդիրներ ունեցող երեխաները սովորեն համայնքային հաստատություններում ՝մյուս բոլորի հետ միասին: Իսկ սրա նատակը այն է, որ ներառված երեխան չմեկուսանա, լինեն հասարակության լիիրավ անդամ: Ասելով ներառված երեխա, հասարակությունը,և որ ավելի վատ է մանկավարժները, ծնողները հասկանում են միմիայն հիվանդ երեխա, շատերը նույնիսկ փորձում են հեռու պահել իրենց երեխաներին ներառված երեխայից:

Ներառական կրթության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է, որը հենվում է յուրաքանչյուր երեխայի անահատական կարիքների գնահատման և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման պահանջի վրա: Ներառական կրթությունը հոգ

է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր հաճախ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին, էթնիկ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և այլոց: Ներառական կրթության իրականացման ճանապարհին կարևորվում է բազմամասնագիտական թիմի ստեղծումը, որի մեջ ներգրավվում է երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ՝ ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ,երեխայի ծնողը և համակարգողը: Այս ծրագրում ամեն մեկն ունի իր յուրովի աշխատանքը: Յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները: Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Մանկավարժական հոգեբանությունը գիտություն է, որի առարկայական ոլորտը կրթությունն է: Ժամանակակից պայմաններում կրթության հիմնական նպատակը անձի կրթությունն է, որը ունակ է ինքնազարգացման, հասարակության, մշակույթի և մասնագիտության մեջ ազատ և գրագետ ինքնորոշման համար: Կրթության զարգացումը առաջնագծում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն երեխայի անհատականության բոլոր ոլորտների (հուզական, անձնական, հոգևոր և բարոյական) ստեղծագործական ներուժի ամրապնդմանը:

Գլուխ 2

2.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրին անհրաժեշտ հարամարեցումներ:

2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացման չափաքանակ տրամադրելու հիմքերը[3]:

3. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

ԿԶԱՊԿՈՒ սովորողին ուսումնական գործընթացում հաջողությամբ ներառելու համար անհրաժեշտ է նրան գնահատել որպես անձնավորություն՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով ու առանձնահատուկ կարիքներով:

Կարիքի գնահատումն իրականացվում է երկու փուլով՝

- Ուսումնական մակարդակի գնահատում, որն իրականացվում է ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:
- տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը:

[3] «Կրթության մասին» ՀՀ օրենք, մաս 1, 10.7 կետ

Գնահատումը պետք է իրականացվի սովորողի համար հնարավորինս սովորական պայմաններում և հնարավորություն ընձեռի նրան դրսևորելու իր ներուժն ու արտահայտել գիտելիքները:

Գնահատման ընթացքում անհրաժեշտ է պարզել՝

- Ի՞նչ կարող է անել սովորողը և ի՞նչ է անում:
- Ո՞րն է նրա զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքի այդ պահին առկա մակարդակը:
- Ունի՞ արդյոք զարգացման հապաղումներ:
- Կարիք ունի՞ արդյոք օժանդակ ծառայությունների (դիետա, թերապիա և այլն):

Մինչև երեխաներին հետազոտելը, գնահատելը երեխայի հետ աշխատող թիմը պետք է կատարի դիտարկում: Դիտարկումն անցկացվում է գործունեության բոլոր ձևերում՝ ուսումնական, խաղային, աշխատանքային: Երեխայի զարգացման համար պատասխանատու և շահագրգիռ մեծահասակները մշտապես և կանոնավոր կերպով պետք է դիտարկեն նրան: Դիտարկումը դառնում է ավելի ամբողջական և անկողմնակալ, երբ համադրվում են մանկավարժների, մասնագետների (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան), երեխայի ծնողների դիտարկումները, որոնց արդյունքում ի հայտ եկած օրինաչափությունները հնարավորություն են տալիս կատարելու առավել ստույգ և արդյունավետ եզրահանգումներ:

Դիտարկողը պետք է՝

- լինի անաչառ,
- նստի խաղասենյակի մի անկյունում,
- չխոսի, չմիջամտի ուսումնական գործնթացին, երեխայի ինքնուրույն խաղին,
- բացահայտի այն ոլորտները, որտեղ անհատական մոտեցման կարիք կա,
- կատարի գրառումներ:

Դիտարկումը պետք է լինի նպատակաուղղված և պլանավորված: Անհրաժեշտ է ձևակերպել դիտարկման հստակ նպատակներ (ի՞նչ և ինչի՞ համար ենք դիտարկում): Երեխան չպետք է զգա, որ ինքը գտնվում է ուշադրության կենտրոնում, որպեսզի իրեն պահի բնական ձևով, և հավաստի ու ճշգրիտ լինեն դիտարկման արդյունքները:

Դիտարկման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեխայի՝

ա) ակտիվությանը և մասնակցությանը տվյալ պարապմունքին,

բ) կարգուկանոնին ենթարկվելուն,

գ) մանկավարժի հրահանգները, հանձնարարությունները ըմբռնելուն, կատարելուն,

դ) աշխատելու տեմպին (արագ, դանդաղ),

ե) ուշադրության կենտրոնացվածությանը,

զ) խմբում սովորողների հետ հաղորդակցվելու կարողությանը, ընդհանուր վարքագծին:

Ուսումնական գործընթացի տարբեր փուլերում պետք է պարբերաբար դիտարկել երեխային: Դա թույլ կտա կատարել առաջընթացի վերլուծություն: Դիտարկման ժամանակ ստացված տվյալները և արդյունքները պետք է գրանցել:

Դիտարկման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել՝

- Ո՞վ է սովորողը
- Որո՞նք են սովորողի ուժեղ կողմերը
- Ո՞րն է նրա զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքների առկա մակարդակը
- Որո՞նք են սովորողի դժվարություններն ու կարիքները
- Ի՞նչ է անհրաժեշտ սովորողին խմբում, տանը, շրջապատում հետագա զարգացման և անկախ լինելու համար:

Այնուհետև՝ պետք է ստանալ ծնողի համաձայնագիրը, որից հետո սկսել բուն գնահատման գործընթացը: Գնահատումը մասնակցային գործընթաց է, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը, աջակցության խումբը, երեխայի դաստիարակները: Գնահատումն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նպատակն է.

- ապահովել ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
- ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրել ֆինանսավորման բարձրացված չափաքանակ սահմանել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը[4]:

[4]Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում, 2018թ,էջ 9

Գնահատման գործիքների ընտրությունը պայմանավորված է նրանով, թե կենսագործունեության որ ոլորտներում են առկա խնդիրները, որքանով են դրանք խանգարում կամ խոչընդոտում անձի լիարժեք գործունեությանն ու մասնակցությանը:

Ֆունկցիոնալ գնահատման նպատակով կիրառվում են հարցաշարեր՝ ուղղված ծնողներին և դաստիարակներին, երեխայի խաղային և ուսումնական գործունեությունը գնահատող թեստեր, զարգացման և ինքնագնահատման, ինչպես նաև անհրաժեշտ աջակցման հաճախականությունը և ինտենսիվությունը գնահատող սանդղակներ: Այս գործիքների կիրառմամբ կազմվեց երեխաների ֆունկցիոնալության մասին նկարագրերը:

2.2 ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԴԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Նախադպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրվում են այն երեխաներին, որոնք տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել են, և հաստատվել է, որ ունեն մանկավարժահոգեբանական աջակցության կարիք: Տվյալ մակարդակում ծառայությունները տրամադրում են նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժները և Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խումբը (ՄՀ աջակցության խումբ): Եթե հաստատությունում չկան անհրաժեշտ մասնագետներ, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից (ՏՄԱԿ)[5]:

Ներառական կրթության պայմաններում հնարավոր է դառնում նպաստել սովորողների սոցիալընկալման և աշխարհաընկալմանը: Ներառական կրթության պայմաններում, մանկավարժից պահանջվում են հատուկ ընդհունակություններ:Նա պետք է կարողանա՝

- հասկանալ երեխաներին
- Ժամանակին խրախուսել
- Աջակցել, ոգևորել
- ներառել ուսումնական գործունեության մեջ:

[5] Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներ

Ուսուցչի կողմից վերը նշվածին հասնելու համար կարևորվում են հանրակրթության պետական չափորոշիչի իմացությունը և հատուկ կրթական ծրագրերի կիրառման կարողությունը:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորվում է նաև ուսուցչի վերահսկման հմտությանը: Չկա առանձին մտավոր, առանձին բարոյական, առանձին աշխատանքային դաստիարակություն:

Ուսուցչի առջև մի ամբողջություն է՝ երեխան, նրա հոգևոր կյանքը: Դաստիարակությունը ճշտորեն արտացոլում է կյանքը, և այն պետք է լեցուն լինի կյանքով ու համապատասխանի կյանքին, այդ դեպքում միայն ուժ կունենա: Ըստ Սուխոմլինսկի « Լավ դաստիարակն, ամենից առաջ, այն մարդն է, որ սիրում է երեխաներին, ուրախություն է ապրում նրանց հետ շփվելիս, հավատում է, որ յուրաքանչյուր երեխա կարող է լավ մարդ դառնալ, կարողանում է ընկերություն անել երեխաների հետ, սրտին մոտ է ընդունում մանկական ուրախությունն ու տխրությունը, ճանաչում է երեխայի հոգին, երբեք չի մոռանում, որ ինքն էլ երեխա է եղել»:

Այսպիսով՝ կրթական հաստատությունները որդեգրելով ներառականության քաղաքականություն, պարտավոր են պատրաստել դաստիարակներին և ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր երեխա կզգա իրեն ընդունված և կստանա իրեն կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ նրանք, ովքեր արդեն իսկ առնչվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, պետք է հենվեն երեխայի հետաքրքրությունների և ուժեղ կողմերի վրա և որ ամենակարևորն է՝ ունենալ այնպիսի սպասումներ, որոնք երեխան ի վիճակի կլինի արդարացնել: Երբեմն նույնիսկ ծանր հաշմանդամություն ունեցող երեխային կարելի է ընդգրկել խմբային աշխատանքներում. Նա կարող է ոչինչ չհասկանալ բովանդակությունից, բայց իր հնարավորության սահմաններում մասնակցելով խմբային աշխատանքին՝ կդառնա այդ խմբի մի մասնիկը:

Յուրաքանչյուր փոքրիկ հաջողություն կարող է մեծ նշանակություն ունենալ երեխայի և իր ծնողների կյանքում: Ուստի, մենք մանկավարժներս, պիտի կարողանանք յուրաքանչյուր երեխայի մեջ տեսնել այն լուսավոր և ուժեղ կողմերը, որի միջոցով նա հնարավորություն կունենա դրսևորել իրեն, քանզի կարծում եմ մենք բոլորս հասարակական էակներ ենք և մեր բոլորի միակ տեղը ներառական հասարակությունն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը ուսումնական հաստատություն մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ավելի մատչելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Ամփոփելով աշխատանքում ներկայացված վերլուծությունը կարող ենք ասել, որ՝

1. Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր երեխաների հանդեպ,

2. Բոլոր մարդիկ աջակցության և հասակակիցների հետ ընկերության կարիք ունեն:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական ծառայություններից:

4. Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:

5. Ներառական կրթության զարգացմանն օժանդակում են դաստիարակները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:

Օգտագործված գրականություն

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում, Մեթոդական ուղեցույց, 2018
2. Ներառական կրթություն: ՈՒսումնամեթոդական ուղեցույց, Ձեռնարկ, 2015
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում: Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ 2018
4. «Կրթության մասին» ՀՀ օրենք
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
6. Ներառական կրթության ռազմավարություններ, 2019թ.
7. https://www.e-draft.am/projects/3791/about